

« 21 » մայիս 2019 թ No 1280 – Լ

«ԱԼՄԱԴԵԶ-ՔԼՈՐ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Ալմադեզ-Քլոր» ակտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

21.05.2019

X

VERIFIED OCSP 21.05.2019 12:13:16 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

ՀՐԱՀԱՆԳ

«ԱԼՄԱԴԵՉ-ՔԼՈՐ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ալմադեչ-Քլոր» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է երկու տեսակի հաբեր և գրանուլներ, որոնք պարունակում են դիքլորիզոցիանուրային թթվի նատրիումական աղ և ֆունկցիոնալ հավելումներ: Ազդող նյութը ակտիվ քլորն է, որն անջատվում է միջոցը ջրի մեջ լուծելու ժամանակ:

1) Հաբեր՝ սպիտակ, գլանաձև, հիմքի մոտ եզրահատումներով, քլորի հոտով, $3,4 \pm 0,3$ գ քաշով: Մեկ հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի զանգվածը $1,5 \pm 0,2$ գ է:

2) Հաբեր՝ սպիտակ, գլանաձև, հիմքի մոտ եզրահատումներով, քլորի հոտով, $1,7 \pm 0,3$ գ քաշով: Մեկ հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի զանգվածը $0,75 \pm 0,10$ գ է:

3) Գրանուլներ՝ մանր, սորուն, սպիտակ գույնի, քլորի հոտով: Ակտիվ քլորի զանգվածային բաժինը առնվազն $56,0 \pm 5,0\%$:

2. Միջոցի պիտանելիության ժամկետը 6 տարի է՝ արտադրողի փակ փաթեթավորմամբ, աշխատանքային լուծույթինը՝ 5 օր (մինչև օգտագործումը):

3. Միջոցը թողարկվում է սերտ փակվող կափարիչներով 0,1 կգ, 0,15 կգ, 0,25 կգ, 0,30 կգ, 0,50 կգ, 1,0-5,0 կգ տարողությամբ պոլիմերային բանկաների և դոյլերի մեջ, 5-50-ական հաբերով բլիստերներով և պոլիմերային տուբերով, 10-70 կգ-ոց թմբուկներով և պոլիէթիլենային պարկերով:

4. Միջոցն ըստ սուր թունավորության չափանիշների՝ ստամոքս ներմուծելիս պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 3-րդ դասին ըստ ԳՈՍ 12.1.007-76, ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման՝ արտաընդերային ներմուծման ժամանակ (որովայնի խոռոչ) պատկանում է քիչ թունավոր նյութերի 4-րդ դասին, ներշնչական (ինհալյացիոն) ազդեցության ժամանակ հագեցած խտություններով (գոլորշիներ) բարձր վտանգավոր է՝ համաձայն ըստ ցնդելիության աստիճանի միջոցների ներշնչական վտանգավորության դասակարգման (վտանգավորության 2-րդ դաս), ցուցաբերում է արտահայտված գրգռիչ ազդեցություն մաշկի և աչքի լորձաթաղանթի վրա, գերզգայունացնող հատկություններով օժտված է: 0,015%-0,06% (ըստ ակտիվ քլորի) աշխատանքային լուծույթները գոլորշիների տեսքով չեն առաջացնում շնչառական օրգանների գրգռում, մեկանգամյա ազդեցության ժամանակ չեն ցուցաբերում գրգռող ազդեցություն մաշկի վրա: 0,1% (ըստ ակտիվ քլորի) և բարձր աշխատանքային լուծույթները մակերեսների ոռոգման և շփման եղանակներով ախտահանման ժամանակ առաջացնում են վերին շնչական ուղիների և աչքի լորձաթաղանթի գրգռվածություն: Քլորի սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային գոտու օդում 1 մգ/մ³ է (գոլորշիներ+աէրոզոլ, վտանգավորության 2-րդ դաս):

5. Միջոցն օժտված է հակամանրէային ազդեցությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիան՝ թեստավորված *Mycobacterium terrae*-ի վրա, ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, սիբիրյան խոցի հարուցիչները), վիրուսների (Կոքսակի, ECHO, պոլիոմիելիտի, ընդերային և արտաընդերային հեպատիտների, ռոտավիրուսների, նորովիրուսների, ՄԻԱՎ, գրիպի, այդ թվում A տիպի, ներառյալ A H5N1, A H1N1, ադենովիրուսների և այլն, ՍՇՎՎ, հերպեսի, ցիտոմեգալիայի հարուցիչների), Կանդիդա ցեղի սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ:

2. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

6. Միջոցը նախատեսված է.

1) Հաբերից և գրանուլներից պատրաստված լուծույթների տեսքով.

ա) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն), կլինիկական, մանրէաբանական, վիրուսաբանական և այլ ախտորոշիչ լաբորատորիաներում, գործողությունների սենյակում, արյան փոխներարկման և վերցման կետերում և կայաններում, սանիտարական տրանսպորտում, վարակի օջախներում, արտակարգ իրավիճակների ժամանակ կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ ախտահանում իրականացնելու ժամանակ սենքերում մակերեսների, կոշտ գույքի, սանիտարա-տեխնիկական սարքավորման, սարքերի և սարքավորումների արտաքին մակերեսների, սպասքի, այդ թվում՝ լաբորատոր (ներառյալ մեկանգամյա օգտագործման), դեղատնային, սպասք լվանալու պարագաների, հիվանդի խնամքի պարագաների, անձնական հիգիենայի միջոցների, բժշկական արտադրատեսակների (կոռոզիակայուն մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակյա), սպիտակեղենի, մաքրման պարագաների, արյան, այդ թվում՝ խոտանված և պիտանելիության ժամկետը սպառված արյան, ողնուղեղային հեղուկի, արտադրությունների (խորխ, փսխման, կղանքային զանգվածներ, մեզ), լվացման հեղուկների (էնդոսկոպիական, կոկորդի ողողման և այլն), սննդի մնացորդների, տեքստիլ և այլ նյութերից բժշկական թափոնների (վիրակապական նյութ, բամբակ-թանգիվե անձեռոցիկ, խծուծ, մեկանգամյա կիրառության բժշկական արտադրատեսակներ և մեկանգամյա սպիտակեղեն օգտահանումից առաջ), խաղալիքների, ռետինե և պրոպիլենային գորգերի, ռետինե, պլաստմասե և այլ պոլիմերային նյութերից կոշիկների ախտահանման համար,

բ) սննդամթերքի տեղափոխման ավտոտրանսպորտում, սպասարկման ոլորտի կազմակերպություններում (հյուրանոց, հանրակացարան, վարսավիրական, մերսման և կոսմետիկ սրահներ, սոլյարի, շոգեբաղնիք, գեղեցկության սրահ, բաղնիք, լվացքատուն, հասարակական զուգարան), առևտրի, զվարճանքի կենտրոններում, պարենային և արդյունաբերական շուկաներում, կրթության, մշակույթի, հանգստի հաստատություններում, կուրորտաբանության, սպորտի օբյեկտներում (լողավազան, սանթոդարան, մշակութա-առողջարարական համալիր, գրասենյակ, մարզահամալիր, կինոթատրոն, թանգարան և այլն), քրեակատարողական հիմնարկներում, սոցիալական ծառայություն մատուցող հաստատություններում (հաշմանդամների, տարեցների տուն և այլն), զորամասերի և միավորումների կենսագործունեության

օբյեկտներում աղբահեռացման համակարգերի (աղբահավաքման սարքավորում, գույք, աղբարկղներ, աղբատարներ) կանխարգելիչ ախտահանում իրականացնելու ժամանակ,

գ) մանկական կազմակերպություններում (եզրափակիչ ախտահանում) և հասարակական սննդի և առևտրի (ռեստորան, բար, սրճարան, ճաշարան) հաստատություններում ախտահանում իրականացնելու համար,

դ) տրանսպորտային համակարգի (ավտոբուս, տրամվայ, տրոլեյբուս, էլեկտրագնաց, արվարձանային ճեպընթաց), արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ), ոստիկանության, պաշտպանության նախարարության (ՊՆ) (և այլն) օբյեկտներում ախտահանում իրականացնելու համար,

ե) բորբոսասնկերով ախտահարված մակերեսների ախտահանման համար,

զ) ջրի պահման տարաների ախտահանման համար,

է) ձվի կեղևի ախտահանման համար,

ը) արտադրական սենքերում և սարքավորումների մակերեսների, կահույքի, դեղերի և իմունաբանական պատրաստուկների արտադրության դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության A, B, C, D դասի մաքրության սենքերի սարքերի և սարքավորումների արտաքին մակերեսների ախտահանման համար,

թ) հիմնական մաքրում իրականացնելու համար,

ժ) սենքերում մակերեսների, կոշտ գույքի, սարքերի, սարքավորումների մակերեսների, հիվանդի խնամքի պարագաների, բժշկական արտադրատեսակների, խաղալիքների, սանիտարա-տեխնիկական սարքավորման, սպասքի, այդ թվում՝ լաբորատոր, սպիտակեղենի, մաքրման պարագաների, արտադրությունների տարաների, բժշկական թափոնների ախտահանման համար՝ մանրէային (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա, սիբիրյան խոց) վարակների ժամանակ կանխարգելիչ և օջախային ախտահանում իրականացնելիս: Բնակչության կողմից՝ կենցաղում (հաբեր) օգտագործման համար՝ համապատասխան կենցաղի համար պիտակով:

2) Գրանուլների տեսքով. բժշկական կազմակերպություններում, կլինիկական, մանրէաբանական, վիրուսաբանական և այլ ախտորոշիչ լաբորատորիաներում,

գործողությունների սենյակում, արյան փոխներարկման և վերցման կետերում և կայաններում, սանիտարական տրանսպորտում՝ մակերեսների վրա և տարաների մեջ հեղուկ արտադրությունների (խորիս, փսխման, կղանքային զանգվածներ, մեզ), լվացման հեղուկների (էնդոսկոպիական, կոկորդի ողողման և այլն), կենսաբանական հեղուկների (արյան, այդ թվում խոտանված և պիտանելիության ժամկետն սպառված, ողնուղեղային հեղուկի) ախտահանման համար:

3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

7. Միջոցի աշխատանքային լուծույթները պատրաստում են առանց էմալի վնասման), ապակյա կամ պլաստմասե տարաների մեջ՝ հաբերի կամ գրանուլների համապատասխան քանակությունը սենյակային ջերմաստիճանի խմելու ջրի մեջ լուծելու միջոցով, մինչև դրանց ամբողջապես լուծվելը (սույն հրահանգի աղյուսակներ 1, 2, 3):

8. Լվացող հատկություն հաղորդելու համար միջոցի աշխատանքային լուծույթներին ավելացվում է լվացող սինթետիկ միջոց 0,5% քանակությամբ (5 գ՝ 1 լ լուծույթին, 25 գ՝ 5 լ լուծույթին, 50 գ՝ 10 լ լուծույթին):

Աղյուսակ 1.

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում (հաբեր՝ 3,4 գ)

Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Աշխատանքային լուծույթի (լ) պատրաստման համար անհրաժեշտ հաբերի քանակ (հատ)			
	5	10	20	60
0,0025	-	-	-	1
0,015	-	1	2	6
0,020	-	-	3	8
0,030	1	2	4	12

0,050	-	3	7	20
0,060	2	4	8	24
0,100	3	7	13	40
0,200	7	13	26	80
0,300	10	20	40	-
0,400	14	27	53	-
0,500	17	33	67	-
0,600	20	40	80	-
1,000	33	67	-	-
2,000	70	130	-	-
2,500	85	165	-	-
3,000	100	-	-	-
4,000	134	-	-	-

Աղյուսակ 2.

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում (հաբեր՝ 1,7 գ)

Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Աշխատանքային լուծույթի (I) պատրաստման համար անհրաժեշտ հաբերի քանակ (հատ)			
	5	10	20	60
0,0025	-	-	-	2
0,015	1	2	4	12
0,020	-	3	6	16
0,030	2	4	8	24
0,050	4	7	14	40

0,060	4	8	16	48
0,100	7	13	27	80
0,200	13	26	54	160
0,300	20	40	80	-
0,400	28	54	107	-
0,500	33	67	134	-
0,600	40	80	160	-
1,000	67	134	-	-
2,000	134	-	-	-
2,500	165	-	-	-
3,000	-	-	-	-
4,000	-	-	-	-

Աղյուսակ 3.

Միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում գրանուլներից

Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Աշխատանքային լուծույթի (լ) պատրաստման համար անհրաժեշտ գրանուլների քաշ (գ)			
	1	5	10	20
0,015	0,27	1,35	2,70	5,40
0,020	0,36	1,80	3,60	7,20
0,030	0,54	2,70	5,40	18,80
0,050	0,90	4,50	9,00	18,00
0,060	1,08	5,40	10,80	21,6
0,100	1,80	9,00	18,00	36,00

0,200	3,60	18,00	36,00	72,00
0,300	5,40	27,00	54,00	108,00
0,400	7,20	36,00	72,00	144,00
0,500	9,00	45,00	90,00	180,00
0,600	10,80	54,00	108,00	216,00
1,000	18,00	90,00	180,00	360,00
2,000	36,00	180,00	360,00	720,00
2,500	45,00	225,00	450,00	900,00
3,000	54,00	270,00	540,00	1080,00
4,000	72,00	360,00	720,00	1440,00

4. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

9. Միջոցի լուծույթները կիրառվում են սույն հրահանգի 6-րդ կետում նշված օբյեկտների ախտահանման համար:

10. Օբյեկտների ախտահանումն իրականացվում է շփման, ոռոգման, ընկղմման, թրջման եղանակներով: Հիվանդի խնամքի պարագաների, բժշկական արտադրատեսակների, սպիտակեղենի, սպասքի, արտադրությունների, սպասք լվանալու պարագաների, խաղալիքների, մաքրման պարագաների ախտահանման համար աշխատանքային լուծույթներով տարաները կափարիչներով սերտ փակված են լինում:

11. Սենքերում մակերեսները, կոշտ գույքը, սարքերի, սարքավորումների մակերեսները շփում են միջոցի լուծույթով թրջված անձեռոցիկով, աշխատանքային լուծույթի 100 մլ/մ² մշակվող մակերեսի ծախսի նորմայով կամ ոռոգվում են 150-200 մլ/մ² հաշվարկով, կախված փոշեցրող սարքից: Ախտահանումից հետո սենքում իրականացվում է խոնավ մաքրում, սենքն օդափոխվում է, մանրահատակը, ողորկված և փայտե կահույքը շփվում չոր լաթով: Բժշկական

կազմակերպություններում կիրառության համար թույլատրված լվացող միջոցների ավելացման ժամանակ (5 գ/լ լուծույթ հաշվարկով), շփման եղանակով մակերեսների մշակման ժամանակ ծախսի նորման 100 մ/մ² է մեկանգամյա մշակման համար: Բորբոսով ախտահարված մակերեսները նախապես մեխանիկորեն (խոզանակի, քերիչի կամ այլ հարմարանքի օգնությամբ) մաքրում և չորացնում են, այնուհետև մեկ կամ երկու անգամ ոռոգում կամ շփում են միջոցի լուծույթով, սույն հրահանգի աղյուսակ 16-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ջրի տարաների մակերեսները ախտահանում են միջոցի լուծույթով լցնելու կամ շփման եղանակով՝ 0,0025% խտությամբ՝ ըստ ակտիվ քլորի (1 հաբ 60 և ջրին): Դրա համար աշխատանքային լուծույթով թրջված անձեռոցիկով (լաթով) շփում են ջրի տարաների ներքին մակերեսները 100 մ/մ² ծախսի նորմայով: Ախտահանիչ պահաժամը՝ 45 րոպե: Օգտագործված անձեռոցիկները (լաթ) ախտահանում են թրջման եղանակով միջոցի 0,2% խտության աշխատանքային լուծույթի մեջ 120 րոպե: Լցման եղանակով ախտահանման ժամանակ ջրի տարան լցնում են միջոցի 0,0025% խտության աշխատանքային լուծույթով՝ 30 րոպե ազդեցության ժամանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 15-ին համապատասխան:

12. Սանիտարատեխնիկական սարքավորումները մշակում են միջոցի լուծույթով թրջված խոզանակի օգնությամբ կամ շփում միջոցի լուծույթով թրջված անձեռոցիկով՝ մշակվող մակերեսի 150 մ/մ² ծախսի նորմայով, ոռոգման եղանակով մշակման ժամանակ՝ 150-300 մ/մ² կախված փոշեցրող սարքավորումից: Ախտահանումից հետո սանիտարատեխնիկական սարքավորումը լվացում է ջրով: Ռետինե գորգերը ախտահանվում են միջոցի աշխատանքային լուծույթով թրջված անձեռոցիկով շփելով կամ ամբողջությամբ ընկղմվում են միջոցի լուծույթի մեջ: Ախտահանիչ պահաժամից հետո դրանք լվացվում են հոսող ջրով:

13. Հիվանդի խնամքի պարագաները (պետքանոթ, տակդիր մոմլաթ, միզընդունիչ, հոգնայի ծայրակալ և այլն), անձնական հիգիենայի միջոցները, խաղալիքները (բացառությամբ փափուկ խաղալիքների) ամբողջությամբ ընկղմվում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ կամ շփվում ախտահանիչ լուծույթով թրջված անձեռոցիկով: Խոշոր խաղալիքները ախտահանվում են ոռոգման եղանակով: Ախտահանումից հետո առնվազն 5 րոպե լվացվում են հոսող խմելու ջրով:

14. Մանր խաղալիքներն ամբողջությամբ ընկղմվում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, խոչընդոտելով դրանց լողալուն, խոշորները՝ շփում են լուծույթով թրջված լաթով կամ ոռոգում միջոցի աշխատանքային լուծույթով: Ախտահանումից հետո դրանք հոսող ջրով լվացվում են առնվազն 7 րոպե:

15. Սպիտակեղենը թրջվում է միջոցի աշխատանքային լուծույթի մեջ 4 լ՝ 1 կգ չոր սպիտակեղենին ծախսի նորմայով (տուբերկուլոզի ժամանակ՝ 5 լ՝ 1 կգ չոր սպիտակեղենին): Տարան սերտ փակվում է կափարիչով: Ախտահանիչ պահաժամից հետո սպիտակեղենը լվացվում և պարզաջրվում է, մինչև քլորի հոտն անհետանա:

16. Մաքրման պարագաները (անձեռոցիկ, ջնջոց, խոզանակ) տարայի մեջ թրջում են (ընկղմում են) միջոցի աշխատանքային լուծույթի մեջ: Ախտահանումից հետո այն պարզաջրում և չորացնում են:

17. Սպասք լվանալու պարագաները ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Ախտահանումից հետո պարզաջրում են, մինչև քլորի հոտի անհետանալը և չորացնում են:

18. Սննդի մնացորդներից ազատված թեյի և ճաշի սպասքն ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Միջոցի լուծույթի ծախսի նորման 2 լ է ճաշի սպասքի մեկ հավաքածուի համար: Տարան փակում են կափարիչով: Ախտահանումից հետո սպասքը առնվազն 5 րոպե լվանում են խմելու ջրով, մինչև քլորի հոտն անհետանա: Մեկանգամյա օգտագործման սպասքը ախտահանումից հետո օգտահանում են:

19. Լաբորատոր (փորձանոթ, կոլբա, ծածկապակի, Պետրիի թաս, ռետինե տանձիկ, պլաստմասե և ռետինե խցաններ և այլն), դեղատնային սպասքը, այդ թվում մեկանգամյա օգտագործման, ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ, ախտահանիչ պահաժամից հետո այն լվանում են հոսող խմելու ջրով, մինչև քլորի հոտի անհետանալը, իսկ մեկանգամյա օգտագործման սպասքն օգտահանում:

20. Ռետինե, պլաստմասե և այլ պոլիմերային նյութերից կոշիկներն ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթի մեջ: Ախտահանիչ պահաժամից հետո առնվազն 5 րոպե լվանում են հոսող ջրով և չորացնում:

21. Բժշկական արտադրատեսակներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի լուծույթի մեջ: Քանդվող արտադրատեսակները միջոցի մեջ ընկղմվում են քանդված վիճակում: Փականային մասեր ունեցող արտադրատեսակներն ընկղմվում են բաց վիճակում, նախապես լուծույթի մեջ դրանցով անելով մի քանի աշխատանքային շարժում՝ դեպի արտադրատեսակի դժվար հասանելի մասեր փականային հատվածում լուծույթի լավ թափանցման համար: Ախտահանիչ պահաժամի ժամանակ խողովակներն ու խոռոչներն ամբողջությամբ լցվում են (առանց օդային խցանների) միջոցի լուծույթով: Լուծույթի շերտի հաստությունը արտադրատեսակների վրա կազմում է առնվազն 1 սմ: Մշակումից հետո գործիքները հանվում են լուծույթով տարայի միջից և դրանք լվացվում միջոցի մնացորդներից հոսող ջրով առնվազն 7 րոպե, հատուկ ուշադրություն դարձնելով խողովակների լվացմանը (ներարկիչի կամ այլ հարմարանքի օգնությամբ), թույլ չտալով լվացման ջրի լցվելը լվացվող գործիքներով տարայի մեջ:

22. Կենսաբանական արտադրությունները (կղանք, փսխման զանգված, մեզ, խորխ) ախտահանում են միջոցի լուծույթներով համաձայն սույն հրահանգի աղյուսակներ 11-14-ում ներկայացված տվյալների: Կղանքը, փսխման զանգվածը, խորխը հավաքում են տարայի մեջ, վրան լցնում են ախտահանիչ լուծույթ կամ գրանուլներ: Տարաները փակում են կափարիչով: Ախտահանումից հետո արտադրությունները (կղանք, սննդի մնացորդ, փսխման զանգված) օգտահանում են: Մեզի վրա ավելացնում են հաբերի կամ գրանուլների անհրաժեշտ քանակություն և խառնում, մինչև դրանց ամբողջական լուծվելը: Տարաները փակում են կափարիչով: Ախտահանումից հետո մեզը լցվում է կոյուղու մեջ:

23. Տարաների մեջ հավաքված կենսաբանական հեղուկների (առանց մակարդուկների արյուն և այլն) վրա զգուշորեն լցվում է (թույլ չտալով ցայտում) միջոցի լուծույթի որոշակի ծավալ կամ գրանուլներ: Տարան փակվում է կափարիչով ախտահանիչ պահաժամի չափով: Ախտահանումից հետո ախտահանված արյան և միջոցի խառնուրդը օգտահանվում է: Տարբեր օբյեկտների մակերեսների վրա թափված արյան վրա լցնում են գրանուլներ կամ զգուշորեն հավաքում միջոցի լուծույթով թրջված անձեռոցիկով, ախտահանիչ պահաժամի չափով այն ընկղմելով միջոցի լուծույթով տարայի մեջ: Թափված արյան մաքրումն ավարտելուց հետո, ինչպես նաև մակերեսների վրա չորացած արյան կաթիլների առկայության

ժամանակ, մակերեսները շփում են միջոցի լուծույթով առատորեն թրջված մաքուր անձեռոցիկով: Գրանուլների և արյան խառնուրդը օգտահանում են: Խորխով թթամանները ընկղմում են տարաների մեջ և վրան լցնում հավասար կամ կրկնակի ծավալով միջոցի լուծույթ կամ վրան լցնում գրանուլներ: Տարաները փակում են կափարիչով: Ախտահանումից հետո թթամանները լվանում են ջրով, մինչև քլորի հոտի անհետանալը: Արտադրությունների (կղանք, մեզ, խորխ և այլն) տարաները ընկղմում են միջոցի լուծույթի մեջ կամ վրան լցնում լուծույթ: Տարան փակում են կափարիչով և ախտահանիչ պահաժամի չափով: Ախտահանումից հետո արտադրությունների տարաները լվանում են հոսող խմելու ջրով, իսկ մեկանգամյա օգտագործման սպասքը՝ օգտահանում: Կենսաբանական հեղուկների տարաները (արյուն և այլն) ընկղմում են միջոցի լուծույթի մեջ կամ վրան լցնում լուծույթ: Տարան փակում են կափարիչով և ախտահանիչ պահաժամի չափով: Ախտահանումից հետո տարաները լվացվում են հոսող խմելու ջրով, իսկ մեկանգամյա օգտագործման սպասքը՝ օգտահանում:

24. Տարբեր նյութերից մեկանգամյա կիրառման բժշկական արտադրատեսակները (մեկանգամյա օգտագործման ներարկիչ, համակարգ, ֆիլտր, ձեռնոց, հիվանդի խնամքի պարագաներ և այլն), տեքստիլ նյութերը (անկողնու և անհատական սպիտակեղեն, վիրակապական նյութ, թանգիվե և բամբակյա խճուճներ, անձեռոցիկներ, մեկանգամյա հատուկ հագուստ՝ խալաթ, դիմակ, գլխարկ, տակաշոր, տակդիր և այլն), լաբորատոր սպասքը (Պետրիի թաս, կաթոցիկ, փորձանոթ, սրվակ, արտադրությունների և այլ նյութերի տարա և այլն) և կենսաբանական թափոնները մշակվում են սույն հրահանգի 12-րդ աղյուսակում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Մեկանգամյա կիրառության արտադրատեսակների մշակման տեխնոլոգիան համանման է սույն հրահանգի 19-րդ կետում շարադրվածին: Ախտահանումից հետո բժշկական թափոններն օգտահանվում են:

25. Տրանսպորտը (սանիտարական, սննդամթերքի տեղափոխման, հասարակական ավտոտրանսպորտ, աղբատարներ և այլն) շփում են միջոցի լուծույթով թրջված անձեռոցիկով կամ ոռոգում փոշեցրող սարքավորումով: Միջոցի լուծույթների ծախսի նորմաները ներկայացված են սույն հրահանգի 9-րդ կետում: Սանիտարական տրանսպորտը վարակիչ հիվանդ տեղափոխելուց հետո ախտահանվում է համապատասխան վարակի ռեժիմներով:

26. Բժշկական կազմակերպություններում վարակների հարուցիչների տարբեր տեսակներով բաղարկված օբյեկտների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակներ 4-14-ում:

27. Ջրի տարաների ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 15-ում:

28. Սպասարկման ոլորտի օբյեկտներում (հյուրանոց, հանրակացարան, հասարակական զուգարան և այլն), մշակույթի, հանգստի հաստատություններում (կինոթատրոն, գրասենյակ և այլն), հասարակական սննդի և առևտրի բնագավառում գործունեություն իրականացնող հաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում, սոցիալական ապահովության և այլ հասարակական տեղերում օբյեկտների ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Աղբահեռացման համակարգերի (աղբահավաքման սարքավորումների, գույքի, աղբարկղերի և աղբատարների) ախտահանման իրականացման ժամանակ օգտագործում են սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված սանիտարա-տեխնիկական սարքավորումների մշակման ռեժիմները:

29. Բաղնիքում, շոգեբաղնիքում, լողավազանում, սպորտային համալիրներում, վարսավիհանոցում, կոսմետիկ սրահներում (և այլն) օբյեկտների ախտահանումն իրականացվում է սույն հրահանգի աղյուսակ 8-ում ներկայացված դերմատոֆիտիաների ժամանակ առաջարկվող ռեժիմներին համապատասխան:

30. Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները ժանտախտի, տուլարեմիայի, խոլերայի ժամանակ ներկայացված են սույն հրահանգի 17-19 աղյուսակներում:

31. Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները սիբիրյան խոցի ժամանակ ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 20-ում:

Աղյուսակ 4.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր, գրանուլներ) մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) վարակների ժամանակ

Ախտահանման	Աշխատանքային	Ախտահանման	Ախտահանման
------------	--------------	------------	------------

օբյեկտներ	լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	ժամանակ	եղանակ
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերես և այլն, սանիտարական տրանսպորտ ¹	0,015	60	Շփում
	0,030	30	Ոռոգում
Սանիտարատեխնիկական սարքավորում ¹	0,030	120	Երկուանգամյա շփում 15 րոպե ընդմիջումով
	0,060	60	Երկուանգամյա ոռոգում 15 րոպե ընդմիջումով
Սպասք՝ առանց սննդի մնացորդների	0,015	15	Ընկղմում
Սպասք (այդ թվում մեկանգամյա օգտագործման) ¹ սննդի մնացորդներով	0,100	120	Ընկղմում
Սպասք՝ լաբորատոր (այդ թվում մեկանգամյա օգտագործման)	0,100	120	Ընկղմում
Սպիտակեղեն՝ չաղտոտված	0,015	60	Թրջում
Սպիտակեղեն՝ աղտոտված	0,200	120	Թրջում

արտադրություններով			
Մաքրման պարագաներ՝ սենքերի մշակման համար	0,030	30	Թրջում (ընկղմում)
Մաքրման պարագաներ՝ սանիտարատեխնիկական սարքավորումների մշակման համար	0,200	120	Թրջում (ընկղմում)
Հիվանդի խնամքի պարագաներ	0,060	90	Շփում կամ ընկղմում
	0,100	60	
Խաղալիք	0,030	60	Շփում կամ ընկղմում
Ձվի կեղևի մակերես	0,020	10	Ընկղմում, ոռոգում
Նշում՝ ⁽¹⁾ նշանը նշանակում է, որ ախտահանումը կարելի է իրականացնել 0,5%-ոց լվացող միջոցի ավելացմամբ			

Աղյուսակ 5.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր, գրանուլներ) վիրուսային վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտներ	Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերես և այլն, սանիտարական	0,0150	60	Շփում կամ ոռոգում
	0,0300	30	

տրանսպորտ ¹			
Սանիտարատեխնիկական սարքավորում ¹	0,0300	120	Երկուանգամյա շփում կամ երկուանգամյա ոռոգում 15 րոպե ընդմիջումով
	0,0600	60	
Սպասք՝ առանց սննդի մնացորդների	0,015	15	Ընկղմում
Սպասք (այդ թվում մեկանգամյա օգտագործման)՝ սննդի մնացորդներով	0,100	120	Ընկղմում
Սպասք՝ լաբորատոր (այդ թվում մեկանգամյա օգտագործման)	0,100	120	Ընկղմում
Սպիտակեղեն՝ չաղտոտված	0,015	60	Թրջում
Սպիտակեղեն՝ աղտոտված արտադրություններով	0,200	120	Թրջում
	0,300	60	
Մաքրման պարագաներ՝ սանիտարատեխնիկական սարքավորումների մշակման համար	0,200	120	Թրջում (ընկղմում)
	0,300	60	
Մաքրման պարագաներ՝ սենքերի մշակման համար	0,030	30	Թրջում (ընկղմում)
Հիվանդի խնամքի պարագաներ	0,060	90	Շփում կամ ընկղմում
	0,100	60	

Խաղալիք	0,060	15	Շփում կամ ընկղմում
Նշում՝ ⁽¹⁾ նշանը նշանակում է, որ ախտահանումը կարելի է իրականացնել 0,5%-ոց լվացող միջոցի ավելացմամբ			

Աղյուսակ 6.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր, գրանուլներ) տուբերկուլոզի ժամանակ (թեստավորված Mycobacterium terrae-ի վրա)

Ախտահանման օբյեկտներ	Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերես և այլն, սանիտարական տրանսպորտ ¹	0,20	60	Շփում կամ ռոռզում
	0,30	30	
Սանիտարատեխնիկական սարքավորում ¹	0,30	60	Երկուանգամյա շփում կամ երկուանգամյա ռոռզում 15 րոպե ընդմիջումով
	0,60	30	
Սպասք՝ առանց սննդի մնացորդների	0,06	60	Ընկղմում
	0,10	30	
Սպասք (այդ թվում մեկանգամյա	0,60	180	Ընկղմում

օգտագործման՝ սննդի մնացորդներով	1,00	120	
Սպասք՝ լաբորատոր (այդ թվում մեկանգամյա օգտագործման)	0,30	60	Ընկղմում
	0,60	30	
Սպիտակեղեն՝ չաղտոտված	0,06	60	Թրջում
	0,10	30	
Սպիտակեղեն՝ աղտոտված արտադրություններով	0,30	120	Թրջում
	0,60	60	
Մաքրման պարագաներ՝ սանիտարատեխնիկական սարքավորումների մշակման համար	0,30	120	Թրջում (ընկղմում)
	0,60	60	
Մաքրման պարագաներ՝ սենքերի մշակման համար	0,20	60	Թրջում (ընկղմում)
	0,30	30	
Հիվանդի խնամքի պարագաներ	0,30	60	Ընկղմում
	0,60	30	
	0,30	60	Երկուանգամյա շփում կամ երկուանգամյա ոռոգում 15 րոպե ընդմիջումով
	0,60	30	
Խաղալիք	0,30	60	Ընկղմում
	0,60	30	
	0,30	60	Երկուանգամյա

	0,60	30	շփում կամ երկուանգամյա ռոռզում 15 րոպե ընդմիջումով
Նշում՝ ⁽¹⁾ նշանը նշանակում է, որ ախտահանումը կարելի է իրականացնել 0,5%-ոց լվացող միջոցի ավելացմամբ			

Աղյուսակ 7.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր,
գրանուլներ) կանդիդոզների ժամանակ

Ախտահանման օբյեկտներ	Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերես և այլն, սանիտարական տրանսպորտ ¹	0,06	60	Շփում կամ ռոռզում
	0,10	30	
Սանիտարատեխնիկական սարքավորում ¹	0,10	60	Երկուանգամյա շփում կամ երկուանգամյա ռոռզում 15 րոպե ընդմիջումով
Սպասք՝ առանց սննդի մնացորդների	0,06	30	Ընկղմում

Սպասք (այդ թվում մեկանգամյա օգտագործման)՝ սննդի մնացորդներով	0,20	120	Ընկղմում
	0,40	60	
Սպասք՝ լաբորատոր (այդ թվում մեկանգամյա օգտագործման)	0,20	120	Ընկղմում
Սպիտակեղեն՝ չաղտոտված	0,06	60	Թրջում
Սպիտակեղեն՝ աղտոտված արտադրություններով	0,20	60	Թրջում
Մաքրման պարագաներ՝ սենքերի մշակման համար	0,10	30	Թրջում
Մաքրման պարագաներ՝ սանիտարատեխնիկական սարքավորումների մշակման համար	0,20	60	Թրջում
Հիվանդի խնամքի պարագաներ	0,20	30	Շփում կամ ընկղմում
Խաղալիք	0,10	30	Շփում կամ ընկղմում
Նշում՝ ⁽¹⁾ նշանը նշանակում է, որ ախտահանումը կարելի է իրականացնել 0,5%-ոց լվացող միջոցի ավելացմամբ			

Աղյուսակ 8.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր, գրանուլներ) դերմատոֆիտիաների ժամանակ

Ախտահանման օբյեկտներ	Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերես և այլն, սանիտարական տրանսպորտ ¹	0,06	60	Շփում կամ ռոռոզում
	0,10	30	
Սանիտարատեխնիկական սարքավորում ¹	0,10	120	Երկուանգամյա շփում կամ երկուանգամյա ռոռոզում 15 րոպե ընդմիջումով
Սպիտակեղեն՝ չաղտոտված	0,06	120	Թրջում
Սպիտակեղեն՝ աղտոտված արտադրություններով	0,20	120	Թրջում
	0,40	90	
Մաքրման պարագաներ	0,20	120	Թրջում
Հիվանդի խնամքի պարագաներ	0,20	60	Շփում կամ ընկղմում
Խաղալիք	0,10	60	Շփում կամ ընկղմում
Սպասք՝ լաբորատոր (այդ թվում մեկանգամյա օգտագործման)	0,20	60	Ընկղմում
	0,30	45	

Ռետինե գորգեր	0,10	120	Շփում կամ ընկղմում
Նշում՝ ⁽¹⁾ նշանը նշանակում է, որ ախտահանումը կարելի է իրականացնել 0,5%-ոց լվացող միջոցի ավելացմամբ			

Աղյուսակ 9.

Բժշկական արտադրատեսակների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով
(հաբեր, գրանուլներ)

Մշակվող արտադրատեսակ	Վարակի տեսակ	Մշակման ռեժիմ		Մշակման եղանակ
		Էստություն ըստ ակտիվ քլորի, %	Պահաժամ	
Բժշկական արտադրատեսակներ՝ կոռոզիոնակայուն մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակյա	Վիրուսային, մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) և սնկային (կանդիդոզներ)	0,20	30	Ընկղմում
	Վիրուսային, մանրէային (ներառյալ տուբերկուլոզը) և սնկային (կանդիդոզներ, դերմատոֆիտիաներ)	0,30	60	
		0,60	30	

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր, գրանուլներ) բժշկական կազմակերպություններում հիմնական մաքրում իրականացնելու ժամանակ

Կազմակերպության (բաժանմունքի) սենք և ուղղվածություն	Աշխատանքային լուծույթի խտությունը ստ ակտիվքլորի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Վիրահատական բլոկ, վիրակապարան, գործողությունների, միջամտությունների սենյակ, կլինիկական լաբորատորիա, վիրաբուժական, գինեկոլոգիական, ուրոլոգիական, ատամնաբուժական բաժանմունքների և ստացիոնարների մանրէազերծման բաժանմունքներ, մանկաբարձական ստացիոնարների ծնարաններ	0,06 0,10	60 30	Շփում կամ ոռոգում
Վճարովի բաժանմունքներ, ֆունկցիոնալ ախտորոշման, ֆիզիոթերապիայի և այլ սենյակներ ցանկացած ուղղվածության (բացառությամբ ինֆեկցիոն) բժշկական կազմակերպություններում	0,015	60	Շփում
	0,030	30	Ոռոգում

Ինֆեկցիոն բժշկական կազմակերպություններ	Համապատասխան վարակի ռեժիմին համապատասխան		
Հակատուբերկուլոզային բժշկական կազմակերպություններ	0,20 0,30	60 30	Շփում կամ ռոռզում
Մաշկա-վեներաբանական բժշկական կազմակերպություններ	0,06 0,10	60 30	Շփում կամ ռոռզում

Աղյուսակ 11.

Կենսաբանական հեղուկների և արտադրությունների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր, գրանուլներ) մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի), վիրուսային և սնկային վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Արյուն (առանց մակարդուկների), տարաներում գտնվող, շիճուկ, էրիթրոցիտային զանգված, փսխման զանգվածներ, մնացորդներ, սննդի	0,3	120	Արյունը խառնել միջոցի լուծույթին 1:2 հարաբերությամբ
	0,5	120	Արյունը խառնել միջոցի լուծույթին 1:1 հարաբերությամբ
	1,0	30	
Խորխ	1,0	60	Արյունը խառնել միջոցի լուծույթին 1:1 հարաբերությամբ
	2,0	30	
Մեզ, կոկորդի ողողման հեղուկ, լվացման ջրեր, այդ թվում էնդոսկոպիական և	0,1	60	Արյունը խառնել միջոցի լուծույթին 1:1 հարաբերությամբ
	0,3	30	

այլն	-	60	Մեզի խառնում հաբերին՝ խառնելով 1 հաբը 1,5 և մեզին հարաբերությամբ
Արտաթորանք, կղանքա-միզային կախույթ	0,5	240	Արտադրությունները խառնել միջոցի լուծույթին 1:2 հարաբերությամբ
	1,0	60	
	2,0	60	Արտադրությունները խառնել միջոցի լուծույթին 1:1 հարաբերությամբ
Արյան, շիճուկի, էրիթրոցիտային զանգվածի, արտադրությունների (խորխ, կղանք, կղանքա-միզային կախույթ, փսխման զանգվածներ) տարաներ, սննդի մնացորդներ	0,5	120	Ընկղմում կամ վրան լուծույթի լցում
	1,0	60	
Արտադրությունների (մեզ) տարաներ, կոկորդի ողողման հեղուկ, լվացման ջրեր, այդ թվում էնդոսկոպիական	0,1	60	Ընկղմում կամ վրան լուծույթի լցում
	0,3	30	
Մակերես կենսաբանական հեղուկը (արյունը) նրա վրայից հավաքելուց հետո	0,06	120	Երկու անգամյա շփում 15 րոպե ընդմիջումով
	0,10	60	

Աղյուսակ 12.

Կենսաբանական հեղուկների և արտադրությունների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր, գրանուլներ) մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային և սնկային վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Լուծույթի խտությունը ստ ալտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Տարաներում գտնվող արյուն (առանց մակարդուկների), շիճուկ, էրիթրոցիտային զանգված, արտադրություններ (փսխման զանգվածներ, խորխ, կղանք, կղանքամիզային կախույթ), սննդի մնացորդներ	2,0	240	Խառնել հեղուկները և արտադրությունները միջոցի լուծույթի հետ 1:4 հարաբերությամբ
	2,5	90	
	3,0	60	
Մեզ, կոկորդի ողողման հեղուկ, լվացման ջրեր, այդ թվում էնդոսկոպիական, և այլն	-	60	Մեզի խառնում հաբերին խառնելով 2 հաբը 1,5 լ մեզին հարաբերությամբ
Արյան, շիճուկի, էրիթրոցիտային զանգվածի, արտադրությունների (խորխ, կղանք, կղանքամիզային կախույթ) տարաներ	0,5	120	Ընկղմում կամ վրան լուծույթի լցնում
	1,0	60	
Արտադրությունների (մեզ) տարաներ, կոկորդի ողողման հեղուկ, լվացման ջրեր, այդ թվում էնդոսկոպիական	0,2	60	Ընկղմում կամ վրան լուծույթի լցնում
	0,6	30	
Մակերես՝	0,3	60	Երկու անգամյա

Կենսաբանական հեղուկը (արյունը) նրա վրայից հավաքելուց հետո	0,6	30	շփում 15 րոպե ընդմիջումով
Արտադրությունների (փսխման զանգվածներ) տարաներ, սննդի մնացորդներ	3,0	60	Ընկղմում կամ վրան լուծույթի լցում

Աղյուսակ 13.

Կենսաբանական հեղուկների և արտադրությունների ախտահանման ռեժիմներ միջոցով (գրանուլներ) մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի), վիրուսային և սնկային (կանդիդոզներ) վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Գրանուլի քաշը (գ) 1 Լ արտադրության մեջ	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Տարաներում գտնվող արյուն (առանց մակարդուկների), շիճուկ, էրիթրոթցիտային զանգված	30	120	Արյան մեջ խառնելով լցնել գրանուլներ
	40	90	
	50	60	
Խորխ, արտաթորանք, կղանքա-միզային կախույթ, փսխման զանգվածներ, սննդի մնացորդներ	50	120	Արտադրության մեջ խառնելով լցնել գրանուլներ
	75	90	
	100	60	

Մեզ, կոկորդի ողողման հեղուկ, լվացման ջրեր, այդ թվում էնդոսկոպիական և այլն	2	60	Մեզի մեջ խառնելով լցնել գրանուլներ
---	---	----	------------------------------------

Աղյուսակ 14.

Կենսաբանական հեղուկների և արտադրությունների ախտահանման ռեժիմներ միջոցով (գրանուլներ) մանրէային (ներառյալ տուբերկուլոզը), վիրուսային և սնկային վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Գրանուլի քաշը (գ) 1 լ արտադրության մեջ	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Տարաներում գտնվող արյուն (առանց մակարդուկների), շիճուկ, էրիթրոթցիտային զանգված	50	120	Արյան մեջ խառնելով լցնել գրանուլներ
	75	90	
	100	60	
	140	30	
Խորխ, արտաթորանք, կղանքա-միզային կախույթ, փսխման զանգվածներ, սննդի մնացորդներ	50	240	Արտադրության մեջ խառնելով լցնել գրանուլներ
	100	120	
Մեզ, կոկորդի ողողման հեղուկ, լվացման ջրեր, այդ թվում էնդոսկոպիական և այլն	5	60	Մեզի մեջ խառնելով լցնել գրանուլներ
	10	30	

Աղյուսակ 15.

Ջրի և մաքրման պարագաների տարաների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր) մանրէային (բացառությամբ տուբերկուլոզի) վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Ջրի պահման տարաներ (ցիստեռն և այլն)	0,0025	45	Շփում
	0,0025	30	Վրան լուծույթի լցնում
Մաքրման պարագաներ ջրի պահման տարաների մշակման համար	0,2000	120	Թրջում (ընկղմում)

Աղյուսակ 16.

Բորբոսով ախտահարված մակերեսների ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով (հաբեր, գրանուլներ)

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ	1,0	60	Շփում կամ ոռոգում
	0,5	120	Երկու անգամյա շփում կամ երկու

			անգամյա ոռոգում 15 րոպե ընդմիջումով
	2,0	15	Երկու անգամյա շփում կամ երկու անգամյա ոռոգում 15 րոպե ընդմիջումով

Աղյուսակ 17.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով (հաբեր, գրանուլներ)
ժանտախտի ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Աշխատանք ային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերեսներ	0,50	60	Ոռոգում
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	1,00	60	Ոռոգում
Սպասք (այդ թվում մեկանգամյա օգտագործման)՝ սննդի մնացորդներով	0,20	60	Ընկղմում
Սպասք՝ մաքուր և լաբորատոր	0,10	60	Ընկղմում
Սպիտակեղեն՝	0,05	60	Թրջում

արտադրություններով չաղտոտված			
Սպիտակեղեն՝ արտադրություններով աղտոտված	0,20	60	Թրջում
Մաքրման պարագաներ	0,20	60	Թրջում
Բժշկական արտադրատեսակներ՝ կոռոզիակայուն մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակյա	0,20	60	Ընկղմում
Կենսաբանական արտադրություններ (մեզ, կղանք, խորխ)	1,0	60	Վրան լցնում են լուծույթ 1:1 հարաբերությա մբ և խառնում
Արյուն	0,5	60	

Աղյուսակ 18.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով (հաբեր, գրանուլներ)
տուլարեմիայի ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Աշխատանք ային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերեսներ	0,50	60	Ոռոզում
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	1,00	60	Ոռոզում
Սպասք (այդ թվում մեկանգամյա օգտագործման)՝ սննդի	0,20	60	Ընկղմում

մնացորդներով			
Սպասք՝ մաքուր և լաբորատոր	0,10	60	Ընկղմում
Սպիտակեղեն՝ արտադրություններով չաղտոտված	0,05	60	Թրջում
Սպիտակեղեն՝ արտադրություններով աղտոտված	0,20	60	Թրջում
Մաքրման պարագաներ	0,20	60	Թրջում
Բժշկական արտադրատեսակներ՝ կոռոզիակայուն մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակյա	0,20	60	Ընկղմում
Կենսաբանական արտադրություններ (մեզ, կղանք, խորխ)	1,0	60	Վրան լցնում են լուծույթ 1:1 հարաբերությա մբ և խառնում
Արյուն	0,5	60	

Աղյուսակ 19.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով (հաբեր, գրանուլներ)
խոլերայի ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Աշխատանք ային լուծույթի խտություն ըստ ակտիվ քլորի, %	Ախտահանմ ան ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերեսներ	0,30	60	Ոռոզում

Սանիտարա-տեխնիկական սարքավորում	0,50	60	Ռոտում
Սպասք (այդ թվում մեկանգամյա օգտագործման)՝ սննդի մնացորդներով	0,10	60	Ընկղմում
Սպասք՝ մաքուր և լաբորատոր	0,05	60	Ընկղմում
Սպիտակեղեն՝ արտադրություններով չաղտոտված	0,05	60	Թրջում
Սպիտակեղեն՝ արտադրություններով աղտոտված	0,10	60	Թրջում
Մաքրման պարագաներ	0,20	60	Թրջում
Բժշկական արտադրատեսակներ՝ կոռոզիակայուն մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակյա	0,20	60	Ընկղմում
Կենսաբանական արտադրություններ (մեզ, կղանք, խորխ)	0,50	60	Վրան լցնում են լուծույթ 1:1 հարաբերությամբ և խառնում
Արյուն	0,30	60	

Աղյուսակ 20.

Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմներ միջոցով (հաբեր, գրանուլներ) սիբիրյան խոցի ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Աշխատանք ային լուծույթի խտություն ըստ ակտիվ	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
-------------------	---	--------------------------	-------------------

	քլորի, %		
Սենքերում մակերեսներ, կոշտ գույք, սարքերի, սարքավորումների արտաքին մակերեսներ	3,0	120	Ոռոգում
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	3,0	120	Ոռոգում
Սպասք (այդ թվում մեկանգամյա օգտագործման)՝ սննդի մնացորդներով	3,0	120	Ընկղմում
Սպասք՝ մաքուր և լաբորատոր	3,0	90	Ընկղմում
Սպիտակեղեն՝ արտադրություններով չաղտոտված	2,0	90	Թրջում
Սպիտակեղեն՝ արտադրություններով աղտոտված	3,0	120	Թրջում
Մաքրման պարագաներ	3,0	120	Թրջում
Բժշկական արտադրատեսակներ՝ կոռոզիակայուն մետաղներից, ռետինե, պլաստմասե, ապակյա	3,0	90	Ընկղմում
Կենսաբանական արտադրություններ՝ մեզ կղանք, խորխ	3,0 4,0	120 120	Վրան լցնում են լուծույթ 1:1 հարաբերությամբ և խառնում
Արյուն	2,0	120	

5. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

32. Միջոցի հետ չի թույլատրվում աշխատել քլորակտիվ միջոցների նկատմամբ բարձր զգայունություն ունեցող մարդկանց:
33. Աշխատանքները 0,015%-ոց (ըստ ակտիվ քլորի) լուծույթներով շփման եղանակով թույլատրվում է իրականացնել պացիենտների ներկայությամբ:
34. Աշխատանքները 0,03-0,06% (ըստ ակտիվ քլորի) լուծույթներով չեն պահանջում շնչառական օրգանների անհատական պաշտպանական միջոցների օգտագործում, սակայն աշխատանքներն իրականացվում են պացիենտների բացակայությամբ:
35. Միջոցի 0,1% (ըստ ակտիվ քլորի) և բարձր խտության լուծույթների հետ աշխատանքներն իրականացվում են РПГ-67 կամ РУ-60М տեսակի «В» մակնիշի պատրոնով ունիվերսալ շնչադիմակներով կամ արդյունաբերական հակազագով շնչառական օրգանների և հերմետիկ ակնոցով աչքերի պաշտպանությամբ: Մշակումն իրականացվում է պացիենտների բացակայությամբ: Մշակված սենքերը օդափոխվում են առնվազն 15-30 րոպե մինչև քլորի հոտի անհետացումը:
36. Միջոցով և նրա լուծույթներով բոլոր աշխատանքներն իրականացվում են ռետինե ձեռնոցով ձեռքերի մաշկի պաշտպանությամբ:
37. Բժշկական արտադրատեսակների, հիվանդի խնամքի պարագաների, սպիտակեղենի, սպասքի, խաղալիքների, մաքրման պարագաների ախտահանման համար աշխատանքային լուծույթներով լցված տարաները պետք է ունենան կափարիչ և սերտ փակ լինեն:
38. Սպասքը, խաղալիքները և սպիտակեղենը ախտահանումից հետո լվանում են ջրով, մինչև քլորի հոտի անհետանալը: Տարբեր նյութերից բժշկական արտադրատեսակները առնվազն 5 րոպե լվացվում են հոսող ջրով:
39. Աշխատանքները հատուկ վտանգավոր վարակների օջախներում 1% (ըստ ակտիվ քլորի) և բարձր աշխատանքային լուծույթներով, ներառյալ աշխատանքային լուծույթների պատրաստումը, իրականացվում է հակաժանտախտային համազգեստով, որի կազմի մեջ մտնում է համազորային հակազագ:

6. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

40. Նախագգուշական միջոցառումները չպահպանելու ժամանակ հնարավոր են շնչառական օրգանների (կոկորդում քերծվածության զգացում, հագ, քթից առատ արտադրություն) և աչքի լորձաթաղանթի (արցունքահոսություն, ծակոց և զուր) սուր գրգռվածություններ, կարող է նկատվել գլխացավ:

41. Շնչառական ուղիների սուր գրգռվածության առաջին նշանների առաջացման ժամանակ անհրաժեշտ է դուրս գալ մաքուր օդի կամ լավ օդափոխվող սենք: Բերանը և քիթը մաքանը ողողել ջրով: Խմել տաք ըմպելիք (կաթ կամ հանքային ջուր): Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

42. Միջոցը մաշկի վրա լցվելու ժամանակ այն լվանալ հոսող ջրով:

43. Աչքերի մեջ միջոցի պատահական լցվելու դեպքում մի քանի րոպե աչքերը առատորեն լվանալ հոսող ջրով: Լորձաթաղանթների գրգռվածության ժամանակ կաթեցնել 1 – 2 կաթիլ նատրիումի սուլֆացիլի 20% կամ 30%-ոց լուծույթ:

44. Միջոցը ստամոքսի մեջ հայտնվելու ժամանակ անհրաժեշտ է խմել ակտիվացված ածուխի 10-20 մանրացված հաբով մի քանի բաժակ ջուր: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

7. ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

45. Միջոցի տեղափոխումը թույլատրվում է վերգետնյա տրանսպորտի բոլոր տեսակներով, արտադրող ընկերության բնօրինակ փաթեթավորմամբ, յուրաքանչյուր տեսակի տրանսպորտի համար գործող և միջոցի ու տարայի անվնասությունը երաշխավորող վտանգավոր բեռների տեղափոխման կանոններին համապատասխան:

46. Միջոցը պահվում է լավ օդափոխվող չոր սենքերում, մինուս 35°C-ից մինչև պլուս 35°C ջերմաստիճանի պայմաններում, արևի ուղիղ ճառագայթներից հեռու, դեղերից, սննդամթերքից առանձին, երեխաների համար անհասանելի տեղերում:

47. Միջոցի թափվելու ժամանակ հաբերն ու գրանուլները հավաքում են տարաների մեջ և ուղարկում օգտահանման: Մնացորդները լվանում են մեծ քանակությամբ ջրով, թույլ չտալով թթվով չեզոքացում: Թափված միջոցի հավաքման ժամանակ օգտագործում են անհատական պաշտպանական միջոցներ՝ խալաթ կամ կոմբինեզոն, ճոքակոշիկներ, B մակնիշի պատրոնով PՈՒ-67 կամ PԿ-60M տեսակի ունիվերսալ շնչադիմակներ կամ «AB» մակնիշի պատրոնով արդյունաբերական հակազագ, հերմետիկ ակնոց, ռետինե ձեռնոց:

48. Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումներ. թույլ չտալ չնոսրացված միջոցի լցվելը կոյուղու, կեղտաջրերի/մակերեսային ջրերի կամ ստորգետնյա ջրերի մեջ:

8. ՄԻՋՈՑԻ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

49. Ըստ որակի ցուցանիշների միջոցը պետք է համապատասխանի սույն հրահանգի աղյուսակ 21-ում ներկայացված պահանջներին և նորմաներին:

Աղյուսակ 21.

Միջոցի որակի ցուցանիշներ

	Որոշվող ցուցանիշներ, չափման միավորներ	Թույլատրվող մակարդակի մեծություն		
		Հաբեր 3,4 գ	Հաբեր 1,7 գ	Գրանուլներ
1	Արտաքին տեսք, օրգանոլեպտիկ նշաններ	Սպիտակ գլանաձև, քլորի հոտով հաբեր		Մանր, սորուն, սպիտակ կամ բաց-գույնի, քլորի հոտով գրանուլներ
2	Մեկ հաբի զանգված, գ	$3,40 \pm 0,30$	$1,7 \pm 0,3$	-
3	Ակտիվ քլորի զանգված մեկ հաբի լուծման	$1,5 \pm 0,2$	$0,75 \pm 0,10$	-

	ժամանակ, գ			
4	Ակտիվ քլորի զանգվածային բաժին չրում լուծվելու ժամանակ, զանգվ., %	-		$56,0 \pm 5,0$
	Լցվածության խտություն, գ/սմ ³	-		$0,92 \pm 0,01$